Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արմեն Նազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2022թ. օգոստոսի 15-17-ը, Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն (ԻԻՀ)

4. Հրավիրող կողմը

ԻԻՀ գիտության և տեխնոլոգիաների գծով նախագահի տեղակալի աշխատակազմ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ Իրանի նորարարական էկոհամակարգի և տեխնոլոգիաների, գիտելիքահեն ոլորտի հնարավորություններին, դեղերի և հավելումների, բժշկական սարքավորումների և պարագաների արդյունաբերության ոլորտներում համագործակցության հնարավորություններին, ինչպես նաև քննարկել հետագա երկկողմ համագործակցության մի շարք ուղղություններ:

6. Քննարկված թեմաները

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ոլորտային մի շարք կարևոր հարցեր, մասնավորապես՝ իրանական դեղերի և բժշկական արտադրանքների Հայաստանի Հանրապետությունում գրանցման, ՀՀ-ում համատեղ արտադրության կազմակերպման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել երկկողմ և բազմակողմ ձևաչափով: Հանդիպել եմ Իրանի առողջապահության կենսատեխնոլոգիաների զարգացման խորհրդի անդամների, ԻԻՀ նախագահի գիտական և տեխնիկական գծով տեղակալի, ԻԻՀ առողջապահության և բժշկական կրթության նախարարի տեղակալի, ինչպես նաև դեղերի արտադրությամբ զբաղվող խոշոր ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են դեղերի ներկրման և արտահանման, ինչպես նաև համատեղ արտադրության հեռանկարային հարցեր: Պատվիրակության կողմից ներկայացվել են ՀՀ-ում դեղերի գրանցման, դեղերի և բժշկական արտադրատեսակների ներկրման և արտադրության ոլորտները:

Այցի շրջանակներում պատվիրակությունը նաև մասնակցել է իրանական պետական արտադրատեսակների ցուցահանդեսին, որում ներկայացված են եղել բժշկական նշանակություն ունեցող արտադրատեսակներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները. իրանական կողմը մեծ պատրաստակամություն հայտնեց երկկողմ համագործակցության շրջանակներում իրանական դեղերը ՀՀ-ում գործող իրավակարգավորումների շրջանակներում գրանցել և դրանք հասանելի դարձնել հայաստանյան շուկային:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների արդյունքում առաջարկվել է երկու երկրների միջև հետագա համագործակցությունը խորացնելու նպատակով հուշագիր ստորագրել:

Միաժամանակ, իրանական կողմից առաջարկվեց համագործակցության շրջանակներում մասնակցություն ունենալ Թեհրանում ս.թ. հոկտեմբերի 10-12-ը կազմակերպվող «Iranpharma Expo 2022» ցուցահանդեսին, որին մասնակցելու են 500-ից ավել դեղագործական կազմակերպություններ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

Signed by: NAZARYAN ARMEN 3712760329

2022 թ. օգոստոսի 19